

նազան գործիչների մահուան կամ յօքելեանի առիթով Գ. Թու-
մանովի գրած լրագրական թուղթիկ ընորոշումները, դուրս են
բերուած կինսագրողների գլխաւորապէս գրական կողմերը:

«Ես կարծում եմ, ասում է հեղինակը, որ այդ ուրու-
գէները կը լինեն որոշ հակակշիռ պամֆլետանների այն առատու-
թեան, որ գրում են մեզ մօտ ամեն մի փոքր ի շատէ աչքի
ընկնող հասարակական գործիչի մասին: Այդպիսի գործիչներ
մենք քիչ ունենք և նրանց գործունէութեան արդիւնքը մեծ չէ,
չնորհիւ ոչ միշտ բարեյաջող պայմանների, որոց մէջ վիճակուած
է նրանց գործել: Ես ցանկանում էի ընդգծել գործիչների ար-
ժանիքները և այդպիսով ժողովրդականացնել այն բոլոր բարին,
ինչ որ աջողուեց դրանց կատարել իրանց դժուար ճանապարհի
վրայ»:

Այդպիսով այս գրքոյկի ընթերցանութիւնը վերակենդա-
նացնում է ընթերցողի յիշողութեան մէջ մեր մօտ անցեալի
ծանօթ գէմբերը, որոնց մարդկային ընութեան յատուկ պակասու-
թիւնները արդէն մոռացուած են, մինչդեռ բարի գործերը մնա-
ցել են: Գ. Արծրունին, Գ. Ջանչեանը, Գ. Տէր-Ստեփանովը, Պ.
Իզմայլովը միացած Ծերեթելիի, Էրիստովի, Կազբէկի, Բարաթա-
չվիլիի և այլ վրացի գործիչների հետ, կարծես ասում լինէին.
«մնզնից իւրաքանչիւրը գործելով թէ իր ցեղակիցների և թէ
ընդհանուր հասարակական կեանքում, մեր ոյժերի չափ նպաս-
տում էինք մեր ընդհանուր հայրենիքի առաջադիմութեան»:

Այդ գրքոյկը թերթելիս պէտք է ցաւենք, որ թուրք ինտե-
լիգենցիան դեռ ևս մինչև այսօր չէ կարողացել իր միջից հանել
հասարակական շահերին նուիրուած ինտելիգենտ ոյժեր: Գրքոյ-
կի մէջ մի քանի էջեր են նուիրուած նաև Լերմօնտովին, մի
քանի տողեր Գրիբօեդովին, Պուչկինին և ուրս այն գրողներին,
որոնք զբաղուել են Կովկասով: Ութը տարուան ընթացքում
(1892—1900) «НОВ. ОБОЗР.» թերթում ցիրուցան լոյս տեսած
համառօտ կենսագրական այս ակնարկները այժմ մի գրքոյկի
մէջ ամփոփելով հեղինակը, կարելի է ասել, մեր Կովկասեան
ազբատիկ հասարակական բուրաստանի անթառամ ծաղիկների մի
փունջ է կապել և այդպիսով միջոց է տուել ընթերցողին համե-
մատել իւրաքանչիւր գրական ծաղկի ինքնորոյն գեղեցկութիւնը:

Լ. Ս.

6) ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ. «Յիւզուրիւններ Վարդանանց թօնի
առիթով»: Մոսկուա, 1901, 66 էրես, դինը 75 կրպէկ:

Հինգերորդ դարը մեր ամբողջ պատմութեան մէջ միակ
փայլուն կէտն է, որի վրայ բնեռուած է եղել մի չարք սերունդ-

ների հիացմունքը: Դա այն դարն էր, երբ մենք գուրս եկանք ասիական վայրենութեան խաւարից: Մենք ունէինք լեզու, բայց զիր ու գպրութիւն չունէինք. մենք, ուրեմն, կիսատ մարդիկ էինք: Մեարոպը տառեր հնարեց մեզ համար, Սահակը գպրոցներ բացեց: Մայրենի լեզուով գրականութիւն ստեղծուեց, որ և կենդանացրեց մեզ: Մենք ոչ միայն սովորում էինք, այլ և սկսեցինք զոհուել գաղափարի համար: Կատարելապէս հասունացանք իբրև ազգ: Մեարոպի այբուբէնը և Սւարայրի արիւնահեղութիւնը—անա ուր սկսուեց և ուր ամրապնդուեց վերածնունդ ազգայնութիւնը, հինգերորդ դարի այդ ամենապահանջելի ծնունդը:

Նոր անցած դարի կէսից, երբ մեր մէջ ծնուեց աշխարհիկ և աշխարհաբար գրականութիւն, երբ մեր կրակոտ երիտասարդութիւնը սկսեց հայութեան մէջ իդէալներ որոնել, հինգերորդ դարը լուսատու աստղի պէս բարձրացաւ մեր խաւար ու ոգբալի անցեալի մէջ: Մենք սկսեցինք պաշտել այդ դարը. հրապարակախօսը, պատմաբանը արծարծում էին հինգերորդ դարի անցածն ու դարձածը մի անսահման հիացմունքով: Հագիւ թէ այն ժամանակների բանաստեղծներից մէկը փորձած չը լինի երգել Վարդանին և նրա գործը: Պ. Շահազիզեանը, այդ բանաստեղծներից մէկը, նոյնպէս իր ոգևորութեան ժամերից շատ է նուիրել հինգերորդ դարին: Նրա «Լեոնի վշտի» և այլ բանաստեղծութիւնների մէջ, որոնք հրատարակուեցան 1865 թուին, հինգերորդ դարի հայ կիւնը, Եղիշէն, Վարդանը երգուած են իբրև ազգային իդէալներ, իբրև մեծ նախնիքներ, որոնց հետևելով պիտի գնայ հայը, եթէ նա չէ ուզում արտաքսուած լինել առաջագիմող ազգերի ընտանիքից:

Երեսուն և հինգ տարի անցնելուց յետոյ բանաստեղծը գալիս է իր «Յիշողութիւններով» նորից խօսելու հայոց պատմութեան ամենանշանաւոր չրջանի առիթով: Այժմ այլևս քընարով չէ նա խօսում ընթերցողի հետ. «Յիշողութիւնները» արձակ-հրապարակախօսական մտածողութիւններ են. և գրանց մէջ մենք տեսնում ենք նոյն «Լեոնի վշտի» հեղինակին, նոյն 60-ական թուականների բանաստեղծին:

Նոր բան այս նոր հրատարակութեան մէջ պ. Շահազիզեանը համարեա չէ ասում: Պատմական հետազօտութիւն չէ այդ գրուածքը. նա չէ ձգտում լուսաբանել ամբողջ հինգերորդ դարը, պատկերացնել նրա մտաւոր-գաղափարական շարժումը բոլոր մանրամասնութիւններով: 59 երևաններից բազկացած մի տետրակի մէջ հագիւ թէ կարելի էլ լինի մի այդպիսի ծրարկը գլուխ բերել. և բացի դրանից պ. Շահազիզեանը հինգերորդ դա-

րի վերաբերմամբ մի ոգևորուած բանաստեղծ է, ուստի և չէ կարող ստանասիրտ ուսումնասիրողի դիրք բռնել և քննել ու վերլուծել պատմական այն յիշատակարանները, որոնք նկարագրում են մեր կեանքի այդ նշանաւոր շրջանը:

Ոչ, Հետազոտութեան, ուսումնասիրութեան տեսակէտից չը պէտք է նայել այս գործին: Իբրև Երեսուն և հինգ տարի անփոփոխ մնացած Լևոն՝ պ. Շահաղիղեանը վերցրել է կրօնական մեծ պատերազմի մի քանի բնորոշ հանգամանքները, արծարծել և լուսարանել է նրանց մեր ժամանակակից կեանքի տեսակէտից: Խօսելով հինգերորդ դարի մասին, նա յաճախ թողնում է այն հին ժամանակը և դիմում է մեր օրերին, շօշափում է դպրոցական, գրական խնդիրներ, կանգ է առնում մայրենի լեզուի ահագին նշանակութեան վրայ և խրատներ է տալիս, յորդորում է, ընդգծում է ժամանակակից հայի արատները, մարտութիւնները: Դեռ 60-ական թուականների սկզբում, Լևոնը, ճանապարհուելով հայրենիք, տեսնում էր դպրոցական յետադիմութիւն, գծում և անդգայ մեծատուններ, տեսնում էր հայ կնոջը՝ մոռացած իր մայրենի լեզուն, իր երեխաների դաստիարակութիւնը յանձնած խորթ, անհարազատ ձեռքերի: Այսօր էլ, երբ բանաստեղծը իջնում է մեր իրականութեան ասպարէզը, նոյն պակասութիւնները, նոյն ցաւերն են դուրս գալիս նրա առաջ: Դա ցոյց է տալիս, թէ՛ սրբան անդգայ ենք մենք, սրբան անբարեխիղճ մեր պարտաւորութիւնների վերաբերմամբ: Երեսուն և հինգ տարուայ ընթացքում մենք այնքան քիչ ուղղուեցինք, որ այսօր էլ պիտի ուսենք նոյն յանդիմանութիւնները, որոնք կարգացում էին 60-ական թուականներին: Ո՛րքան շատ են մեզանում «մոռացուած խօսքեր»...

Ոչ որ չէ կարող ասել թէ կրկնել այդ «մոռացուած խօսքերը» հարկաւոր չէ: Ընդհակառակն, մեզ պէս մոռացկոտ, անպարտաճանաչ ազգին անհրաժեշտ է անդադար յիշեցնել այն, ինչ որ չը պէտք է երբէք մոռացուի: Եւ պ. Շահաղիղեանը յիշեցնում է. նրա «Յիշողութիւնները» չը պէտք է հասկանալ այն մտքով, թէ նա պատմում է իր գլխով անցած-գնացածը. ոչ, պ. Շահաղիղեանը միայն յիշեցնում է: Հինգերորդ դարի հանգամանքների մէջ նա խօսեցնում է մեր օրերը, ներկան: Կարգացէք, ընթերցող. այդ սակաւթիւ էջերի մէջ դուք կը գտնէք խելացի մտքեր, անուրանալի ճշմարտութիւններ: Թող հայ մայրը ամենայն ուշադրութեամբ սովորէ այն կտորները, որոնք իրան են վերաբերում: Հայ ուսուցիչը, հայ հոգևորականը, հայ անբարեխիղճ մեծատունը կը գտնեն այդտեղ ցուցմունքներ, թէ

ինչպէս պէտք է լինել՝ հինգերորդ դարի գաղափարական հայ
արժանի ժառանգ լինելու համար...

Գիրքը գրուած է պ. Շահաղիգեանին յատուկ աշխոյժ լե-
զուով և կարդացոււմ է հետաքրքրութեամբ:

Լ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) Գիւտ ա. քահ. Աղանեանցի «1901 թ. Պատի օրացոյց»
գինը 50 կոպ.:
- 2) Ամենայն Հայոց կաթողիկոսի դիւանատնից՝ իբրև նոր տա-
րուայ շնորհաւորութիւն Նորին Վեհափառութեան կողմից՝
«1901 թ. օրացոյց», 2 օրինակ, փառակազմ:

«Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը խնդրում է հեղինակ-
ներին և թարգմանիչներին ուղարկել իրանց աշխատութիւնները,
որոնց մասին կ'աշխատի մատենախօսական նկատողութիւն-
ներ տալ: